Հավելված N 1
ՀՀ կառավարության 2019 թվականի
նոյեմբերի 21-ի N 1667 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՍԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ՁԿԱՆ ԵՎ ԽԵՑԳԵՏՆԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների վերականգնման, պահպանման և վերարտադրման հետ կապված հարաբերությունները:

2. Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների վերարտադրման ենթակա տեսակները, քանակները, բացթողման ենթակա մանրաձկան (մանր խեցգետնի) գծային և քաշային չափանիշները, բացթողման վայրերի ընտրությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում պետական լիազորված մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) համաձայնությամբ:

3. Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների վերականգնման, պահպանման և վերարտադրման նպատակով՝

1) լիազորված մարմնի կողմից իրականացվում է ձկնատեսակների և խեցգետնի պաշարի հաշվառման (կենսաբանական չափանիշների որոշման և արդյունագործական պաշարների գնահատման) գործընթացի կազմակերպումը.

2) «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջներով մշակված տարեկան ծրագրում (այսուհետ՝ տարեկան ծրագիր) սահմանվում են Սևանա լճում արդյունագործական նպատակներով ձկան և խեցգետնի որսի տարեկան առավելագույն չափաքանակները, արդյունագործական որսի որակի բնութագրերը (որսի

ժամկետները, կենդանական պաշարների օգտագործման մասին պայմանագրերի գործողության ժամկետը, ձկան և խեցգետնի որսի իրականացման համար թույլատրելի չափսերը և քաշը միավորի համար (սմ/գրամ), որսամիջոցների նկարագիրը).

3) «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ տարածքը տնօրինող) կողմից իրականացվում է Սևանա լճի ջրհավաք ավազանից Սևանա լճի և նրա մեջ թափվող գետերի համար ոչ աբորիգեն, ինչպես նաև ինվազիվ տեսակների դեպի լիճ ներթափանցման նկատմամբ հսկողություն:

4. Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների վերարտադրության և վերականգնման իրականացման եղանակներն են՝

1) աճեցման ամբողջական ցիկլով՝ մայրական կազմ – ձկնկիթ – թրթուր – մանրաձուկ – մայրական կազմ.

2) աճեցման ոչ ամբողջական ցիկլով՝ ներառելով ամբողջական ցիկլի մի մասը, օրինակ՝ մայրական կազմ – ձկնկիթ – թրթուր – մանրաձուկ.

3) մանրաձկան բացթողմամբ Սևանա լիճ և (կամ) նրա ջրհավաք ավազանի գետեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2019 թվականի
նոյեմբերի 21-ի N 1667 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՍԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ՁԿԱՆ ԵՎ ԽԵՑԳԵՏՆԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ, ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԻ ՔԱՆԱԿՆԵՐԻ, ՁԵՎԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների, արդյունագործական որսի քանակների և ձևերի որոշման հետ կապված հարաբերությունները:

2. Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների, արդյունագործական որսի քանակների որոշման համար հիմք են հանդիսանում բնական կենդանական պաշարների հաշվառման տվյալները:

3. Բնական կենդանական պաշարների հաշվառումն իրականացվում է «Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կենդանական աշխարհն ուսումնասիրող սուբյեկտների կողմից:

4. Արդյունագործական որսի քանակների որոշման նպատակով Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների ուսումնասիրության շրջանակներում կենդանական աշխարհն ուսումնասիրող սուբյեկտների կողմից իրականացվում է՝

1) Սևանա լճում ձկների կենսաբանական չափանիշների որոշում և պաշարների գնահատում, նախորդ տարիների հետ համեմատականներ և վերլուծություններ՝ Սևանա լճում ձկան պաշարների հաշվառում, այդ թվում՝

ա. սիգի՝ ընդհանուր զանգվածի և արդյունագործական պաշարի գնահատում, արդյունագործական որսաչափի վերաբերյալ առաջարկության ներկայացում, գիրացող վտառի ուսումնասիրություն (գծային և քաշային աճ, չափատարիքային կազմ, սննդառություն), ձվադրող վտառի ուսումնասիրություն (բեղունության, չափատարիքային կազմ),

բ. կարասի՝ արդյունագործական պաշարի գնահատում, ձվադրավայրերի և ձվադրման ժամկետների ուսումնասիրություն, գծային, քաշային աճի, բեղունության, բնական վերարտադրության ուսումնասիրություն,

գ. իշխանի՝ ընդհանուր զանգվածի որոշում, գիրացող վտառի և (կամ) առանձնյակների ուսումնասիրություն (գծային և քաշային աճ, չափատարիքային կազմ, սննդառություն), ձվադրող վտառի և (կամ) առանձնյակների ուսումնասիրություն (բեղունության, չափատարիքային կազմ, քանակ),

դ. Սևանի կողակի, Սևանի բեղաձկան և այլ ձկնատեսակների ուսումնասիրություն, ընդհանուր զանգվածի որոշում և վիճակի գնահատում.

2) Սևանա լճում խեցգետնի կենսաբանական չափանիշների որոշում, պաշարների գնահատում, նախորդ տարիների հետ համեմատականներ և վերլուծություններ, այդ թվում՝ խեցգետնի ընդհանուր զանգվածի և արդյունագործական պաշարի գնահատում, արդյունագործական որսաչափի վերաբերյալ առաջարկության ներկայացում, սեզոնային բաշխվածության որոշում՝ ըստ խորության և տարածքի, սննդառության, գծային և քաշային աճի, սեռական և չափատարիքային կազմի և բեղունության ուսումնասիրություն.

3) Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերում էնդեմիկ ձկնատեսակների ուսումնասիրություն, կենսաբանական տվյալների, բնական ձվադրավայրերի առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում և հիմնավորում՝ Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերում էնդեմիկ ձկնատեսակների ուսումնասիրություն, այդ թվում՝

ա. Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիչի, Վարդենիկ, Մասրիկ և Կարճաղբյուր (Մաքենիս) գետերում Սևանի էնդեմիկ ձկների (իշխան, կողակ, բեղլու) քանակի, սեռական ու չափատարիքային կազմի, սննդառության, բեղունության, ձվադրավայրերի, վերարտադրության վիճակի ուսումնասիրություն և գնահատում,

բ. Սևանա լճում օտարածին ձկնատեսակների էկոհամակարգի վրա ազդեցության գնահատում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2019 թվականի
նոյեմբերի 21-ի N 1667 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ
# ՍԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ՁԿԱՆ ԵՎ ԽԵՑԳԵՏՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Սևանա լճում արդյունագործական նպատակներով ձկան և խեցգետնի որսի կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Ձկան և խեցգետնի որսի իրականացման հայտը լրացվում է՝ համաձայն N 1 ձևի, իսկ ձկան և խեցգետնի որսի իրականացման պայմանագրերը կնքվում են՝ համաձայն N 2 ձևի:

3. Սևանա լճում արդյունագործական նպատակներով ձկան և խեցգետնի որս իրականացնելու պայմանագրեր (այսուհետ՝ պայմանագիր) կնքելու համար հիմք են հանդիսանում տարեկան ծրագրով սահմանված դրանց օգտագործման տարեկան առավելագույն չափաքանակները:

4. Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի կազմակերպման նպատակով տարածքը տնօրինողի կողմից իրականացվում է՝

1) Սևանա լճում ձկնորսության նպատակով օգտագործվող լողամիջոցների մուտքի և ելքի տեղամասերի ստեղծում, որտեղից լողամիջոցների մուտքը և ելքը կազմակերպվում է օրվա լուսային ժամերին.

2) որսի ժամկետների և չափաքանակների նկատմամբ հսկողություն.

3) որսի քանակական և որակական հատկանիշների գրանցում և հաշվառում՝ համաձայն N 3 ձևի:

5. Յուրաքանչյուր տարի լիազոր մարմինը Սևանա լճում արդյունագործական նպատակներով ձկան և խեցգետնի որսի իրականացման պայմանագրերի կնքման

գործընթացն սկսելու մասին զանգվածային լրատվության միջոցներով ծանուցում է հասարակությանը և տեղադրում իր պաշտոնական կայքէջում (http://շմն.հայ):

## II. ՁԿԱՆ ԵՎ ԽԵՑԳԵՏՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

6. Սևանա լճում արդյունագործական նպատակներով ձկան և խեցգետնի որս իրականացնել ցանկացողները (այսուհետ՝ հայտատու) լիազոր մարմին են ներկայացնում պայմանագիր կնքելու մասին հայտ՝ նշելով՝

1) հայտատուի տվյալները (իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը).

2) ձկան և խեցգետնի տեսակը.

3) չափաքանակը.

4) օգտագործման ենթակա տարածքը (տեղադիրքը).

5) օգտագործման ժամանակահատվածը.

6) որսամիջոցները.

7) ձկնորսության նպատակով օգտագործվող լողամիջոցի տեսակը և նկարագիրը.

8) ձկնորսների քանակը և անձնագրային տվյալները:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված փաստաթղթերը կարող են ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

8. Լիազոր մարմինը հայտն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է փաստաթղթերի ամբողջականությունը, փաստաթղթերը թերի լինելու դեպքում տեղեկացնում է հայտատուին՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում վերացնելու լիազոր մարմնի մատնանշած թերությունները: Լիազոր մարմնի կողմից հայտի քննարկման ընթացքը կասեցվում է մինչև հայտ ներկայացրած անձի կողմից փաստաթղթերում առկա թերությունների վերացումը:

9. Լիազոր մարմինը հայտը և դրան կից ներկայացված փաստաթղթերն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում կնքում է պայմանագիր կամ մերժում է հայտը:

10. Հայտի մերժման հիմքերն են՝

1) հայտում և դրան կից ներկայացված փաստաթղթերում իրականությանը չհամապատասխանող տվյալների առկայությունը.

2) հայտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված որսամիջոցներ (որսագործիքներ), կամ որսի համար արգելված ձկան և խեցգետնի տեսակներ, կամ ձկան և խեցգետնի տեսակներ, որոնց համար տարեկան թույլատրելի չափաքանակներ սահմանված չեն, կամ դրանց օգտագործման թույլատրելի չափաքանակներից ավելի չափաքանակներ, կամ որսի համար արգելված ժամանակահատված նշված լինելը.

3) հայտում ներկայացված ձկան և խեցգետնի տեսակի վիճակի որակական և քանակական տվյալների վերաբերյալ ոչ բարենպաստ ցուցանիշները (համաճարակային հիվանդություններ, էկոլոգիական հավասարակշռության խախտման վտանգ, մարդու առողջությանն սպառնացող վտանգներ).

4) հայտում ներկայացված ձկան և խեցգետնի տեսակը Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված լինելը.

5) հայտում ներկայացված ձկան և խեցգետնի համար տարեկան սահմանված չափաքանակների սպառված լինելը:

11. Լիազոր մարմնի կողմից հայտի մերժման դեպքում վերջինս դրա մասին որոշման ընդունումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է հայտատուին՝ նշելով մերժման հիմքերը:

12. Պայմանագրի մեջ նշվում են հայտատուի տվյալները, օգտագործման ենթակա տարածքի տեղադիրքը, օգտագործման ժամանակահատվածը, ձկան և խեցգետնի տեսակը, որսամիջոցները և դրանց նկարագիրը, ձկնորսության նպատակով օգտագործվող

լողամիջոցները և դրանց նկարագիրը, օգտագործման չափաքանակը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, նախատեսվող բնօգտագործման վճարի չափը, պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը, պայմանագրի փոփոխման և երկարաձգման պայմանները, այլ դրույթներ:

13. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, պայմանագրի պատճենը լիազոր մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է տարածքը տնօրինողին:

14. Լիազոր մարմինն իր պաշտոնական կայքէջում (http://շմն.հայ) պարբերաբար տեղադրում է տվյալ տարվա համար կնքված պայմանագրերի և սահմանված արդյունագործական պաշարի սպառված չափաքանակների վերաբերյալ տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

**Ձև N 1**

# ՀԱՅՏ

## ՍԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՁԿԱՆ ԵՎ ԽԵՑԳԵՏՆԻ ՈՐՍԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

**Հայտատուի տվյալներ**

_____

_____

(իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը)

**Օգտագործման ենթակա տարածքը[1] (տեղադիրքը)**

Մեծ Սևան □

Փոքր Սևան □

**Որսամիջոցները[2] և դրանց նկարագիրը**

Խեցգետնի որսի դեպքում _____

_____

Ձկան որսի դեպքում _____

_____

**Օգտագործման ժամանակահատվածը[3]**

Խեցգետնի որսի դեպքում _____

Ձկան որսի դեպքում _____

**Ձկնորսության նպատակով օգտագործվող լողամիջոցները և դրանց նկարագիրը**

_____

_____

_____

| Ձկան տեսակը[4] | Խեցգետնի տեսակը[4] | Չափաքանակը (հատ, կգ) |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

[1], [2], [3], [4] օգտագործման ենթակա տարածքը, որսամիջոցները և դրանց նկարագիրը, ձկան կամ խեցգետնի տեսակը, որսի իրականացման ժամանակահատվածը սահմանվում են տարեկան ծրագրով:

Հայտին կից ներկայացվում են հայտում նշված տեղեկատվությունը հավաստող փաստաթղթերը:

Հայտատու՝

սույնով հավաստում եմ, որ ես և իմ կազմակերպության աշխատակիցները ծանոթ ենք Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի N 1945-Ն որոշման պահանջներին:

_____

_____

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Հայտը ներկայացնելու ամսաթիվը

_____ 20 թ.

**Ձև N 2**

# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

## ՄԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՁԿԱՆ ԵՎ ԽԵՑԳԵՏՆԻ ՈՐՍԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ք. Երևան ----- ---------- 20 թ.

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության կառավարության անունից ի դեմս՝

_____ մի կողմից,
և
(անունը, ազգանունը, պաշտոնը)

հայտատուն_____
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման կամ վկայականի համարը, գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և բնակության վայրը)

ի դեմս _____
(անունը, ազգանունը)

մյուս կողմից (այսուհետ՝ կենդանատեսակ օգտագործող), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով լիազոր մարմինը կենդանատեսակ օգտագործողին իրավունք է վերապահում

_____ նպատակով,

_____ տարածքում,
(օգտագործման ենթակա տարածքի տեղադիրքը)

_____

_____ որսագործիքով,
(տեսակը, նկարագիրը, քանակը)

_____

_____ ձկնորսով (ձկնորսներով),
(անձնագրի տվյալները)

_____ լողամիջոցներով,

կատարել _____ որս
(ձկան և խեցգետնի տեսակը (այսուհետ՝ կենդանատեսակ) և քանակը)

_____ թ.-ից մինչև _____ թ. ընկած ժամանակահատվածում:

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Լիազոր մարմինը իրավունք ունի՝

2.1.1. պահանջելու որսալ պայմանագրով սահմանված քանակից ոչ ավելի և ընտրված տեսակին համապատասխան կենդանատեսակ.

2.1.2. պահանջելու որսն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի և պայմանագրի պայմանների պահպանմամբ.

2.1.3. կատարելու ուսումնասիրություն և իրականացնելու հսկողություն կենդանատեսակ օգտագործողի կողմից պայմանագրով նախատեսված պահանջների կատարման նկատմամբ.

2.1.4. ստուգելու կենդանատեսակ օգտագործողի ներկայացրած հաշվետվությունների համապատասխանությունը սահմանված պահանջներին.

2.1.5. պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո կենդանատեսակ օգտագործողից պահանջելու իրականացված որսի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը.

2.1.6. պահանջելու վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ պայմանագրի 5.1-ին կետում նշված դեպքերում:

2.2. Լիազոր մարմինը պարտավոր է՝

2.2.1. կենդանատեսակ օգտագործողին նախազգուշացնել օգտագործման հանձնվող կենդանական պաշարի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (սերվիտուտ և այլն) մասին.

2.2.2. կենդանատեսակ օգտագործողին տրամադրել կենդանատեսակի պահպանության վերաբերյալ տեղեկատվություն և խորհրդատվություն.

2.2.3. որսի նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N ____ Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված տարածքը տնօրինողի միջոցով վարել գրանցման մատյան, որտեղ կատարվում են գրանցումներ որսատարածքի, որսի նպատակով տարածք մուտքի և ելքի ժամերի, այդ ընթացքում որսված կենդանու քանակի, տեսակի, չափերի, որսագործիքների և այլ անհրաժեշտ նշումների վերաբերյալ:

2.3. Կենդանատեսակ օգտագործողն իրավունք ունի՝

2.3.1. իր հայեցողությամբ տնօրինելու պայմանագրում նշված կենդանական պաշարը՝ պայմանագրի պայմանների և տրամադրման նպատակին համապատասխան.

2.3.2. Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով իրացնելու կենդանատեսակի օգտագործումից ստացված արտադրանքը և տնօրինելու եկամուտները.

2.3.3. լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո իրականացնելու կենդանական պաշարների բարելավման միջոցառումներ.

2.3.4. պահանջելու վաղաժամկետ լուծել պայմանագիրը:

2.4 Կենդանատեսակ օգտագործողը պարտավոր է՝

2.4.1. գործել Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով.

2.4.2. կենդանատեսակն օգտագործել բացառապես պայմանագրի պայմանների և տրամադրման նպատակին համապատասխան.

2.4.3. պահպանել պայմանագրում նշված տարածքի վայրի կենդանիների տեսակային բազմազանությունը և չխախտել բնական միջավայրի ամբողջականությունը.

2.4.4. ապահովել կենդանական պաշարների շարունակական օգտագործումն ու վերարտադրությունը.

2.4.5. չօգտագործել օրենսդրությամբ արգելված լողամիջոցներ և որսագործիքներ.

2.4.6. տալ համապատասխան տեղեկատվություն տարածքը տնօրինողի կողմից վարվող գրանցման մատյանում համապատասխան գրանցումներ կատարելու համար.

2.4.7. կենդանական պաշարից օգտվելու հետևանքով խախտված էկոհամակարգը վերականգնել սահմանված ժամկետում.

2.4.8. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերով և կարգով հատուցել բնությանը պատճառած վնասները.

2.4.9. զերծ պահել մթնոլորտային օդը, հողը, անտառները, ջրերը և շրջակա միջավայրի մյուս օբյեկտները, ինչպես նաև շինությունները և այլ կառույցները, բնության, պատմության և մշակութային հուշարձանները կենդանական պաշարի օգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից.

2.4.10. յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո յոթօրյա ժամկետում լիազոր մարմնին ներկայացնել հաշվետվություն՝ պայմանագրով նախատեսված կենդանատեսակի որսված քանակության և դրան համապատասխան Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով պետական բյուջե վճարած բնօգտագործման վճարի վերաբերյալ.

2.4.11. իր կողմից պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում ոչ ուշ, քան տասն օր առաջ լիազոր մարմնին պատշաճ կերպով գրավոր ծանուցել դրա մասին:

## 3. Պայմանագրով նախատեսող վճարները

3.1. Կենդանատեսակ օգտագործողի կողմից Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով պետական բյուջե նախատեսվում է վճարել ---------- բնօգտագործման վճար:

## 4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է պայմանագիրը կնքելուց

հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 5. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցնելու հիմքերը

5.1. Լիազոր մարմնի կողմից պայմանագիրը կարող է միակողմանի և վաղաժամկետ լուծվել, եթե՝

5.1.1. կենդանատեսակ օգտագործողը կենդանատեսակն օգտագործել է Հայաստանի Հանրապետության օրենքների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի և պայմանագրի պայմանների խախտումներով.

5.1.2. կենդանատեսակ օգտագործողը լրիվ կամ մասնակիորեն հրաժարվում է պայմանագրային պարտավորությունների կատարումից.

5.1.3. կենդանատեսակի օգտագործման համար տրված տվյալ տարածքը վերցվում է պետական կամ հասարակական կարիքների համար.

5.1.4. ստեղծվել է ակնհայտ սպառնալիք կենդանական պաշարի բնական վերարտադրության կամ բնակչության անվտանգության համար.

5.1.5. ձեռք են բերվել ձկան և խեցգետնի տեսակի վիճակի որակական և քանակական տվյալների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված ոչ բարենպաստ ցուցանիշներ (համաճարակային հիվանդություններ, էկոլոգիական հավասարակշռության խախտման վտանգ, մարդու առողջությանն սպառնացող վտանգներ):

5.2. Նշված հիմքերով պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում լիազոր մարմինը որևէ գույքային պատասխանատվություն չի կրում:

## 6. Պայմանագրի փոփոխումը

6.1. Պայմանագրի դրույթների փոփոխումը կատարվում է կողմերի համաձայնությամբ: Կատարվելիք փոփոխությունները կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում: Դրանք ձևակերպվում են լրացուցիչ համաձայնագրով:

## 7. Այլ դրույթներ

7.1. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկ օրինակ:

7.2. Լիազոր մարմնի կողմից կարող են սահմանվել կենդանատեսակի օգտագործման հատուկ պայմաններ, որոնք հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4. Պայմանագրին կարող են կցվել հավելվածներ _____ էջից, ___ օրինակ:

## 8. Պայմանագրի ժամկետը

8.1. Պայմանագրի ժամկետը սահմանվում է _____ թ.-ից մինչև _____ թ.:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Կենդանատեսակ օգտագործող | Լիազոր մարմին |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| (բանկային վավերապայմանները) | (բանկային վավերապայմանները) |
| _____ | _____ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |

Կ.Տ

**Ձև N 3**

## ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆ
## ՈՐՍԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ

| Որսի ժամանակահատվածը (ամսաթիվը) | Որսատարածքը | Որսի քանակը հատ (կգ) | Որսի տեսակը | Որսի համար թույլատրելի չափսերը և քաշը միավորի համար | Որսագործիքները | Մուտքի ժամը | Ելքի ժամը | Այլ նշումներ | Տվյալներ ընդունողի ստորագրությունը | Տվյալներ հանձնողի ստորագրությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |